

**ՎԱՆԱՏՈՒՐ ԵՎ ԱՄԱՆՈՐ ԾՊՏՅԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ**

ՎԱՐԴ ԲԴՈՅԱՆ

Տարեգլխի հովանավոր Վանատուր աստվածությունը ամենասիրված և համազգայնացված պաշտամունքներից էր հեթանոսական Հայաստանում: Նրա մեհյանը գտնվում էր Բագրևանդ գավառի Բագավան-Դիցավանում, որտեղ պիտի որ լինեին նաև նրա արձանը: Վանատուրի տոնը կատարվելիս է հղել զարնան տարեգլխին (մարտի սկիզբ) կամ ամռան տարեգլխին (օգոստոսի սկիզբ):

Մ. Խորենացու վկայությամբ Վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուհալ գերեզման հղբօրն իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բագնացն աւանի, որ ի Բագրևանդ գաւառի, Բագին ի վերայ գերեզմանին շինեալ, զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկօթիւք¹: Գրիգոր Մագիստրոսի հաղորդման համաձայն, Արտաշես II-ը մահվանից առաջ ցավագին հիշել է նավասարդյան անկրկնելի տոնակատարությունները, ասելով. «Ո՛ տայր ինձ, ասէր, զԺուխ ծխանի և զառաօտն նավասարդի, զվազելն հղանց և զվարգելն հղջերուաց. մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք, որպէս օրէնն է թագաւորաց»²:

Այս վկայությունից, ինչպես նաև մինչև XIX դ. վերջերի ամանորյա տոների ավանդական սովորություններից երևում է, որ նավասարդի տոնակատարությունների հեթանոսական արարողություններին ուղեկցել են ժողովրդական խաղերն ու մարզական մրցությունները: Դա ինքնին հաստատում է նաև Վաղարշ թագավորի վերահիշյալ միջոցառումը: Սրանով էլ պետք է բացատրել Հայաստանի բոլոր վայրերից ուխտավորների մեծ զանգվածների հոսքը Բագավան: Այս հանգամանքը իր հերթին հարկադրել է մտածել Դիցավանում հյուրանոցներ և զխավոր լեռնանցքներում իջևաններ կառուցելու մասին³: Թերևս այս էր պատճառը, որ Վանատուրը թիբրե հյուրընկալ, հյուրասեր, օտարաց և պանդխտաց ընդունող է համարվել⁴: Վանատուրի հետ սերտ կապված է մի այլ աստվածություն: Դա Ամանորն է, որի վերաբերյալ առաջին ակնարկը գտնում ենք Ագաթանգեղոսի Պատմության մեջ: Այսպես, օրինակ, նա գրում է. «Եւ զյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց տօն մեծ

¹ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1913, էջ 201—202:

² «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Աղէքսանդրապօլ, 1910, էջ 87:

³ Հիշյալ իջևանատները, ինչպես իրավացիորեն ենթադրել է Ղ. Ալիշանը, պիտի որ շնվիրյալ ըլլան այս դից (Վանատուրին—Վ. Բ.), որք և հետին ժամանակս փոխակա կամ փութկա կոչվին, կարավանատուն և կրպակ նշանակելով (Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 303):

⁴ Նույն տեղում, էջ 302:

հռչակել, յառաջագոյն կարծեալ սնոտեացն պաշտաման՝ ի ժամանակի դիցն Ամանորալ ամենաբեր նորոց պտղոց տօնից հիւրընկալ դիցն Վանատուրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոյ պաշտէին՝ յուրախութեան նաւասարդ աւուրս⁵:

Այս հաղորդման մեջ արժարժովոյ Ամանոր և ամենաբեր բառերի վերաբերյալ բանասիրութեան մեջ կան որոշ դիտողութիւններ: Կ. Կոստանյանն ազաթանդեզոսյան սուլն պարբերութեան հետ առնչութիւն չունեցող Ամենաբեղ աստվածանուն է հիշատակել⁶, որը, ինչպես դիտել է Ա. Առաքելյանը, հավանորեն ծագեցրել է ամենաբեր բառից: Մինչդեռ ամենաբերը ոչ թե անձնանունից է ծագում, այլ բուն Վանատուրի դերն է, պտղաբերական տիտղոսը: Ղ. Ալիշանը Ամանոր անձնանունն ընդունում է իբրև իգական սեռի աստվածանուն⁷: Հ. Գեղեցիկը շրջանցել է Ղ. Ալիշանի այս ճիշտ կռահումը, թեև ինքը Ամանորի էութեան բացահայտման փորձ չի արել⁸: Ա. Առաքելյանը Ղ. Ալիշանի կռահումը շրջանցելուց բացի, Ամանորը և Կ. Կոստանյանի առաջարկած Ամենաբեղը համարում է Վանատուրի զուգանունները⁹: Տողերիս գրողը նույնպես Ամանորն ընդունել է իբրև Վանատուրի անձնանուններից մեկը, անտեսելով Ղ. Ալիշանի հիշյալ կռահումը¹⁰:

Գերթելով Ամենաբեղն աստվածանուն համարելու Կ. Կոստանյանի վարկածը, ինչպես նաև Ամանորը Վանատուրի հետ նույնացնելու Ա. Առաքելյանի և մեր տեսակետները, մենք սուլն հողվածով փորձում ենք հաստատել երկու շատ կարևոր հանգամանք: 1. Ազգագրական և բանահյուսական որոշ նյութերի իմաստների նոր մեկնաբանութեան հիման վրա հաստատել Ղ. Ալիշանի կռահումն այն մասին, թե Ամանորը իգական աստվածութիւն է և Վանատուրի կինն ու պաշտոնակիցը: 2. Յուլյց տալ, որ ժողովրդական տարրական քանդակագործութեան մեզ հայտնի լեռ և Վաւիլ անվանյալ կուռքերը, ինչպես նաև լեռնակ կոչված բույսի մարդաձև արմատը, ըստ հնագույն պատկերացումների, հանդիսանում են պտղաբերութեան հովանավոր աստվածութիւնների՝ Վանատուրի և Ամանորի ծպտյալ արձանները:

Անտարակուսելի է, որ հեթանոսական աստվածութիւնները երբեմն բազմանուն են լինում: Բայց տվյալ դեպքում Վանատուրը և Ամանորը տարբեր

⁵ «Ազաթանդեզայ Պատմութիւն», Թիֆլիս, 1882, էջ 482:

⁶ Կ. Կոստանյան, Հայոց հեթանոսական կրօնը. Վաղարշապատ, 1879:

⁷ Ղ. Ալիշան, Հին հավատք, էջ 302—307:

⁸ Հեներիկոս Գեղեցիկ, Հետազոտութիւն հայ դիցաբանութեան, Վենետիկ, 1897, էջ 97—101:

⁹ Ա. Գ. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակութի զարգացման պատմութիւն, հ. 1, Երևան, 1959, էջ 68—70:

¹⁰ Վ. Հ. Բոբոյան, Հայ ազգագրութիւն. համառոտ ուրվագիծ, Երևան, 1974, էջ 231—232: Ազաթանդեզոսի հաղորդումից այնպես է երևում, թե, իբր, բերքի հովանավոր աստվածութիւնը երկանուն է՝ Ամանոր և Վանատուր, ընդ որում, Վանատուր արական անունը կազմված է «հյ. վանք+տուր բառերից, իբր «հյուրընկալ, հյուրասիրութիւն ցուլց տվող» (Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 36), իսկ Ամանորը բաղկացած է «հյ. ամ ատարի+նոք բառերից, իբր «նոր տարի». հին հայոց հեթանոսական կրօնում նոր տարվա աստվածը, նշան հունձքի և առատութեան» (նույն տեղում, հ. Ա, Երևան, 1942, էջ 114): Այստեղից էլ՝ ամանորաբեր հնագույն բառը՝ «նոր տարի բերող» և «տարվա առաջին պտուղ» նշանակութիւններով (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, 1944, էջ 55):

աստվածների անուններ են, թեև պարզ երևում է, որ դրանք ֆունկցիոնալ առումով անանջատելի են, որովհետև ոչ միայն միևնույն դերն են ունեցել, այլև եղել են ամուսիններ։ Այս հարցին առաջինն անդրադարձել է Ղ. Ալիշանը։ Ձեռքի տակ ունենալով Վերտումնոս և Պոմոնա ամուսին աստվածությունների օրինակը¹¹, նա գրում է. «Եթե չեմք կըրնար հաստատել՝ զոնե կըրնամք վա-



Նկ. 1. Լոշ կուռք՝ կերտված գեղձից ու ընկուզից։

յելուչ ըսել, որ Վանատուրն և Ամանորա գիք այլ հարսնու փեսան ըլլան հայոց այգյաց և պարտիզաց»¹²։ Ալիշանի այս ենթադրությունը հաստատվում է ազգագրական և բանահյուսական նոր տվյալներով։

¹¹ Ամանորա գիքը նկատի ունենալով Ղ. Ալիշանը գրում է. «Կու վայելի, որ այդ Ամանորաբեր շատվածն՝ լատինաց Պոմոնա (Pomona) գիցուհւոյն փոխանն ըլլա, կամ իր փեսային Վերտումնոսի (Vertumnus), որ էր պարտիզաց և պահիզաց պահապան և կերպարաներ գեղեցիկ ծաղկապսակ երիտասարդ մի, պտուղներ և եղջյուր առատության ի ձեռին. նույնպես և Պոմոնա՝ գեղեցիկ հավերժահարսն՝ որթով և ողկուղներով պսակյալ և նույն առատության կամ ամենաքեր եղջյուրն ի ձեռին» («Հին հավատք», էջ 304)։

¹² Նույն տեղում, էջ 304։ Լ. Ի. Բիլագովը ուրարտական Խալդին և Բագրարտուն համա-

Արդ, անդրադառնանք ազգագրական և բանահյուսական նյութերին՝ Իրանք Վանատուրին և Ամանորին մարմնավորող կուռք-արձաններ են՝ ուղեկցող հավատալիքներով, ծիսակատարություններով և դիցաբանական այլ և այլ տվյալներով¹³։

Լոշ.— Աշտարակում և շրջակայքում այսպես է կոչվում այն մարդակ կուռքը, որն ամեն տարի դեղձի բերքահավաքի ժամանակ կանանց ձեռքով նարնջի և ճղովի կոշված դեղձերից կերտվում է ալանի պատրաստելիս։ Ընդ որում, մարմինը ձևավորվում է նարնջից, կցման տեղերի հարդարումը՝ ճղովից, որով Լոշին խայտաբղետություն է հաղորդվում (նկ. 1)։ Բայց ոմանք Լոշ են կերտում միայն ճղովից, որը նախորդի խայտաբղետությունը չի ունենում։ Քանդակումը ձևավորվում և ավարտվում է երեք շերտով։ Առաջին շերտի համար նախօրոք արևի տակ 6—7 օր չորացնում են նարնջի դեղձի բարակ շերտեր, որոնք կուռքը պատրաստելիս պետք է ունենան 5—6 մմ հաստություն։ Այս շերտով ձևավորվում են իրանը, գլուխը, ձեռքերը և ոտքերը՝ առանց թաթերի։ Ապա թարմ ճղովի դեղձի թանձրուկով կցոնները միացվում են իրար, որով ստացվում է բարակ, լավաշի նման ամբողջական պատկեր։ Երկրորդ շերտը կազմում են տափակ շարվածքով չփշրված ընկույզի միջուկները, որ ավանդական ձևն է։ Վերջին տասնամյակներում այս շերտի ավանդական ձևը խախտվել է. շատերը Լոշի, ալանի և Լոշի գաթայի մեջ լցնելիք և հավանգով ծեծված ընկույզին խառնում են շաքարի փոշի։ Երրորդ շերտը առաջին շերտի տառացի կրկնությունն է՝ նույն հաստությամբ և ձեղքերը կարկատելու ձևով։ Այն հարդարելուց հետո առաջին և երրորդ շերտերը կողքերում իրար են կցում նարնջի բարակ շերտիկներ դնելով և ճղովի մածուկով ծեփելով, որով Լոշն ամբողջանում է։ Նույն եղանակով է կատարվում Լոշի գլխի կերտումը, ըստ որում, առաջին շերտը ճակատամասում թեքվում է դեպի կուռքը այնպես, որ ծոծրակամասը և գագաթը միասին մասնակի կտրված թուփյուն են ունենում։ Բերանը և աչքերը ձևավորվում են ընկույզի կտորներ ագուցելով։ Քիթը չի քանդակվում։ Թևերը իրանի նկատմամբ տարբեր դիրքավորում են ունենում։ Մի դեպքում դրանք կանթվում են¹⁴, երբեմն էլ ունենում են զանազան չափերի բացվածքներ։ Ոտքերը համապատասխանում են կանգնած մարդու կեցվածքին։ Սեռի պատկանելիության արտաքին նշաններ չկան, թեև իրանի կառուցվածքը, կեցվածքը և գլխի ձևը արական նշաններով են օժտված։ Արտաքին տեսքը տղամարդու զգեստ հագածի տպավորություն է թողնում¹⁵։

Լոշի քանդակումն ավարտելուց հետո տախտակի վրա 3—4 օր դրսում չորացնում են։ Ընդ որում, գիշերը դուրսը թողնելը պետք է, որ աղերս ունենա ռաստղունք դնելու՝ գաղափարի հետ, որը բերք ու բարիքի առատացում է ենթադրում։

ում է բուսականության ամուսին աստվածություններ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 11, էջ 98—101)։ Մեղ այնպես է թվում, թե Վանատուրը և Ամանորը հենց դրանց հետնորդներն են։

¹³ Մեր մի ալլ աշխատության մեջ Վանատուրի և Ամանորի ծպտյալ արձաններ ենք համարել բանահյուսությունից և ազգագրությունից հայտնի «էրկաթե» և «փետե» մարդիկ և նուրիները, իսկ իվլիկը որպես Վանատուր-Ամանորի ծպտյալ անուն։

¹⁴ Թևեր կանթելը վկայվում է նաև Օշականում (Պ. Քեշիշյանի ձեռագիր գրառումից)։

¹⁵ Գ. Սրվանձտյանցի հաղորդման համաձայն՝ Վանում «Միրանի չիրեն ամուսնանա» կընեն, մարդու կերպ, թունոց կերպ, և ալլ զանազան ձևերով կը շարեն» («Մանանա», 1876, էջ 99)։ Ըստ էության «Մուսթանան» (կորիզահան շոր ծիրան) նույն Լոշն է եղել։

ԼՐԱԲԵՐ 12—6

Սովորույթի համաձայն՝ ունեւոր տնտեսութիւններն անցյալում պատ-
րաստում էին իրենց երեխաների թվից ավելի, իսկ մյուսները՝ 1—3 լոշ: Լո-
շերը պահվում էին ամանորյա տոնին գործածելու նպատակով պահեստա-
վորվող ալանիի, սուջուիի, կաղինի, բաղամի, չիր և չամիչի, փշատի, Լոշի
գաթայի հետ: Խորհրդանշական է, որ դրանց հետ մի քանի խնձոր ու սեր-
կել էր պահվում: Այդ մթերքները զետեղվում էին այն ծիսական ամանի մեջ,
որը հայտնի էր բունունիկ կամ բունունիկ անունով (նկ. 4—4)¹⁶: Բնիկ Արա-
րատյան հովտեցիները Լոշը հնուց ի վեր պատրաստում ու պահում էին Ամա-
նորին իրենց և հյուրընկալող երեխաներին պարգևելու նպատակով: Երբ
նրանց Ամանորը շնորհավորելիս ամբողջական Լոշ չէին կարողանում նվիրել,
դանակով այն կիսում էին և «տարի» ծիսահացի նման բաժանում: Երեխա-
ների համար Լոշ պարգև ստանալը ցնծութեան տոն էր. այդ պատճառով Լոշը
պատրաստելուց ի վեր երեխաներն իրենց հատուկ անհամբերությամբ սպա-
սում էին Ամանորին:

Լոշի կերտման ժամանակ նույն նյութերից և նույն շերտավորությամբ
պատրաստում էին Լոշի գաթա՝ 3 սմ հաստությամբ և 13—15 սմ տրամագծով:
Սա ևս դրսում չորացվում էր 3—4 օր և պահվում Լոշի հետ: Վերջին հիսնամ-
յակում Լոշի գաթայով հյուրասիրվող կանանց թեյ են մատուցել, իսկ տղա-
մարդկանց՝ խմիչք (դրա գործածման հնավանդ եղանակը չի հիշվում)¹⁷:

Պտղահամալիր ժամանակ մրգից Լոշ կերտելը, մրգի և Լոշի գաթայի մեջ
ընկույզ դնելը, որն անտարակուսելիորեն աղերսվում է առնական կարողու-
թյան ակտիվացման հետ, ինչպես նաև Լոշը աստեղային կրոնական պատ-
կերացումների և Ամանորի հետ առնչակցելը որոշակիորեն համոզում են, որ
այդ կուլթը վաղ քրիստոնեական շրջանի Վանատուրի ծպտյալ արձանն է
եղել:

Ինչպես երևում է Լոշի ձեռքերը երբեմն կանթելու սովորութիւնից, որ
հայ ժողովրդական քանդակագործութեան և կավագործութեան մեջ ընդունված
միայն կանացի կեցվածք է, վերջինս կերտվել է նաև կնոջ կերպարանքով:
Այդ են վկայում նաև այն, որ եղվարդցիները Լոշին տիկին անունն են տա-
լիս¹⁸: Այս պարագայում անտարակուսելի է, որ տիկին Լոշը պիտի մարմնա-
վորեր Ամանորի կերպարը, որպես Վանատուրի կինն ու պաշտամունքային
զուգակիցը (հմտ. ստորև ներկայացվող Վասիլները, նկ. 3—2):

Ամենայն հավանականությամբ՝ հեթանոս հայերը Լոշը ճաշակել են գար-
նանային նավասարդի մարտի 1-ին: Դա հաստատվում է բնունիկով Լոշ և այլ
ընտիր ուտելիքներ պահելու սովորութիւնով:

16 Բնունիկը ձվաձև աման է՝ կաղմված երկու հողաձև դամբուղներից, որոնք առանձին-
առանձին մոխրաւ են կոչվում: Առանձին մոխրատները նախապես սվաղում էին հասիլ աւաժ
և մասնակի շափով մղմեղ խառնած կվալ: Ժիպոտահյուսքը սվաղելիս մոխրատները կարասի
հողի ձև էին ստանում: Դրանք չորացնելուց հետո հողաբերաններն իրար միացնում, դուրս
ցցված ճիպոտածայրերը ազուցում, խրում էին հյուսվածքների մեջ ու գոտին նորից սվաղում:
Հաստացված գոտին չորանալիս բռնակի դեր էր կատարում: Մոխրատներից մեկը կճուճի նման
բերան էր ունենում, որը ծածկում էին շորե խցանով:

17 Այս տվյալները մեզ հաղորդել է բնիկ աշտարակցի Վիկտորյա Տանուտերյան—Սարգս-
յանը (այժմ երևանաբնակ, 1918 թ. ծնված): 1914 թ. նա պատրաստել է ներկայացվող Լոշը,
որի համար հայտնում ենք շնորհակալութիւն:

18 Նկարագրեց եղվարդցի Զոհրաբ Զոհրաբյանը, ծնված 1897 թ., ունի տարրական կրթու-
թիւն: Նա նկարագրածի ականատեսներից է:

Ասվեց, որ ընունիկը ձվաձև աման էր՝ կազմված երկու նույնաձև հոդերից (նկ. 4—4): Այդ ամբողջությունը կատարելապես հիշեցնում է հնագույն կարասե երկմասնյա դազաղը: Անտարակուսելի է, որ բնունիկը յուրօրինակ մոմիա կրող դազաղի դեր է ունեցել, որի մեջ, բերքի տոնը կատարելուց հետո, երբ բնությունը ժամանակավորապես մահանում էր, պիտի զետեղվեին Վանատուր և Ամանոր ամուսինների կուռքերը՝ զարնանը հարություն առնելու պայմանով: Այդ իմաստով էլ բնունիկը զարնանային նավասարդի 1-ին բաց անելը և լոշերը վալեյելը միանգամայն տրամաբանական կլիներ:

Հետագայում հունվարի 1-ին բնունիկը բանալու հետ կապված ծիսական գործողությունները լոկ կրկնությունն էին այն ամենի, ինչը պիտի տեղի ունենար հեթանոսական Ամանորին¹⁹։ Ընդ որում, երեխաներին ծնողների հետ հյուր ընդունելիս լոշով հյուրասիրելը Բաղավանի հյուրընկալման և հյուրասիրման հեռավոր արձագանքներն էին։ Շատ հնարավոր է, որ Դիցավանում ևս լոշ կերտելու և բաժանելու սովորություն է եղել, որով հեռու վայրերից եկածներն իրենց երեխաներին հաղորդակից էին դարձնելու ճիշտ այնպես, ինչպես խաչավալով էին անում քրիստոնեության շրջանում՝ դարձյալ հեթանոսաբար։

Այժմ երկու խոսք լոջ անձնական հարցի շուրջը: Ինչո՞ւ լոջ և ոչ Վա-
նատուր—Ամանոր: Ի՞նչը պիտի ստիպեր անվանափոխվել: Այս հարցի լու-
ծումը կապվում է ծպտումի (ընդհատակ անցնելու) երևույթի հետ, որին մենք
անդրադարձել ենք այլ առիթներով²⁰: Ըստ այդմ՝ նոր կրոն սահմանվելիս
հինը իր տեղը չգիշելու համար մարդկանց պատկերացումներում ծպտում է
ապրում: Հին աստվածություններն անանջատելիորեն մտնում են նորերի մեջ,
կոչվում են նրանց անուններով, բայց երկար ժամանակ պաշտվում հին առում-
ներով. մարդիկ առեռես նորի հետ են, բայց պաշտամունքային ծիսակատա-
րություններ կատարելիս՝ հնրերի հետ: Եվ կամ հին աստվածության անվան
փոխարեն երևան է գալիս նոր, հասարակ, ուշադրություն չգրավող մի մակ-
դիր, ինչպիսին Վանատուրին և Ամանորին փոխարինող Լոջն էր: Ընդ որում,
պետք է, որ որոշ փոփոխություն կրեր նաև կուռք-արձանի ձևը՝ ծպտումը կա-
տարյալ դարձնելու նպատակով: Այսպես է պատահել նաև Անահիտի անվան
հետ, որը բանահյուսության մեջ Պառավ անունն է ստացել²¹: Պատճառն այն
է, որ ծպտումի ենթարկված դիցաբանական անձնավորությունները մի քանի
սերունդների ընթացքում կորցնում են իրական անունը, և մնում է լոկ նրան
փոխարինած մակդիրը:


Այսպես ուրեմն, ի՞նչ անվան տակ թաքնված դեղձակերտ արական սեռի կուռքը Վանատուրն է և իգականը՝ նրա կին Ամանորը՝ սերտ միասնության մեջ:

19 Դիտենք, որ վերևում հիշատակված աշանին, սուշուխը և մյուս պահունի պտուղներն այլ բան չէին, քան Վանաձորին և Ամանորին ընծայաբերվող ընտիր ուտելիքներ: Մինչև այսօր էլ այդ մրգերը զարդարում են այգեգործական շրջանների ամանորյա սեղանները:

20 Վ. Բ գ ո յ ա ն, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 469—471, ինչպես նաև մեր «Армянские солонки с фигурой женщины, как конспирация статуи богини Анаит» («მასალები სიქართველოს ეთნოგრაფიისათვის», XVI—XVII, თბ., 1972, էջ 267—272):

21 ԵՌԼՅՆ ԵՒՆԴՈՒՄ:

Լոշտակ.— Վանատուրի և Ամանորի պաշտամունքի հետ անմիջական աղերս ունի լոշտակ (լոշտակ) կոչված բազմամյա բույսը (նկ. 2)։ Հայաստանի լեռնային մասերում աճում է դրա երկու տեսակը՝ սպիտակ լոշտակը (*Bryonia alba* L) և երկտուն լոշտակը (*Bryonia dioica* Jacq)։ Հնագույն ժամանակներից առ այսօր սրա արմատն օգտագործվում է ժողովրդական



Նկ. 2. Լոշտակ (Ղ. Ալիշան, Հայրուսակ)։

բժշկության մեջ՝ իբրև ներքին հիվանդություններ բուժող դեղամիջոց։ Արմատը (տակ), որ նման է ճյուղավոր գազարի, ավելի քան 50 սմ երկարություն ունի և բազկի չափ հաստություն։ Այն երկճյուղ է և եռաճյուղ. առաջինը հիջեցնում է մարդու իրանն ու ոտքերը, իսկ երկրորդը՝ իրանը և թևերը։ Այդ պատճառով էլ լոշտակը հայտնի է նաև մարդատակ, մարմնատակ, մարդանատակ, մարդախոտ և մարդածաղիկ²² անուններով²³։

Բուժական օգտակարության և մարդանմանության պատճառով լոշտակը ոչ միայն հայերի, այլև շատ ուրիշ ժողովուրդների մեջ պաշտվել և բույսի բույսերի թագավորն է հռչակվել։ Պաշտամունքները, որոնք անիմիստական, տոտեմական և այլ բնույթի են, հանգեցրել են առասպելական պատմությունների հորինմանը։

Միջնադարյան բժշկարաններում պահպանված են լոշտակի վերաբերյալ անչափ ուշագրավ տվյալներ, որոնք անմիջական աղերս ունեն աստեղային կրոնի հետ։ Նրա տերևները նմանեցվում են շնախաղողի տերևներին, իսկ մանրիկ պտուղները՝ խաղողին, որի լիակատար հասունացումը և պեղման թուլլատրելիությունը կապվում են Հրատի և Արևի հետ։ Ընդ որում, կիսապեղած լոշտակը չվանով նրան կապված քաղցած շունն է հանելու, որը կարծեցյալ շարժերից պիտի հալածվի և զոհվի, և որ «երեք օր պարտ է զարդարած աղջիկ մի ի հետ տանել, որ (լոշտակը) առավել պայծառանա»։ «Վնասազերծված» արմատը պետք է փաթաթվի նոր գործած սպիտակ կտավով և ծաղիկը՝ քաթանով ու կապկպվի 7 գույնի մետաքսե թելերով²⁴։

Ս. Լալաչանը հաղորդում է Բորչալուի մի ավանդություն, որի համաձայն այդ բույսը լոշտակ անունով մի փոքրավոր է եղել, որն իր վարդապետից շատ նեղություններ կրելով, քնած ժամանակ այրել է նրա մորուքը։ Վարդապետը նրան անիծել է «գետինը մտնես» ասելով և լոշտակը իսկույն գետինն է մտել։

22 Ղ. Ալիշան, Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն, Վենետիկ, 1895, էջ 223։

23 Ախալքալաքի կարնահայությունը հայտնի է մի այլ լոշտակ կոչվող բույս, որի արմատը գազարի նման է և ունի 20—25 սմ երկարություն. տերևները, որ ունեն 15—20 սմ մեծություն, նման են փղի ականջներին։ Արմատը և հյութեղ ցողունն ուտվում են։ Դրանց հետ կապված հավատալիքներ չեն հիշվում։

24 Ղ. Ալիշան, Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն, էջ 223։

Այսպես զղջալով՝ վարդապետն օրհնել է, ասելով՝ «Ամենայն հիվանդության դեղ լինիս»։ Քիչ անց հետո այրվածի ցավը նորից զգալով, կրկին անիծել է, ով որ նրան հանե, ինքը մտնի նրա տեղը։ Եվ ահա այդ է պատճառը, որ մարդիկ զգուշանում են հանելու և շանն են հանել տալիս»։ Շանը 7 օր քաղցած պահում, կապում են արմատի գլխին, ծեծում են, որ քաշի, հանի։ «Արմատը դուրս դալիս այնպիսի մի սոսկալի ձայն է արձակում, որ շունն երկյուղից սատկում է։ Մարդը ևս չի ազատվիլ մահից, եթե որ կամենա ինքը հանել»²⁵։ Տարոնում լոշտակը հանելիս, իբրև զոհ, նրան ու կամ աքաղաղ էին կապում²⁶։

Այսպիսով, ակնհայտ է, որ լոշտակն առասպելականացված, դիցաբանական տեսք ստացած բույս է, որի տերևները և պտուղները շատ նման են խաղողի համապատասխան մասերին։ Այս նմանության պատճառով էր, որ լոշտակը պիտի մտնեի Վանատուրի հովանավորության տակ։ Հեթանոսական հավատքի մեջ մտնելուն նպաստել են նաև այս բույսի տոտեմական և հավատալիքների ոգեպաշտական մնացուկները։ Հատկանշական է, որ կան տվյալներ, որոնք որոշակիորեն հաստատում են լոշ-խաղող բույսերի պաշտամունքային ազգակցությունը։

Գ. Սրվանձաթյանցը դեռևս 1870-ական թվականներին հրատարակել է լոշտակին նվիրված շատ ուշագրավ մի աղոթք²⁷։ Աղոթողը լոշտակին այցի է անվանում, որին աստված շնորհներ է պարգևել և բոլոր խոտերի վրա թագավոր կարգել։ Նա քրիստոնեական սրբերի զորությամբ հալածում է այսերին և դեներին, այսինքն՝ վանում է Վանատուրին։ Այս աղոթքը հիմքում հեթանոսական է. այն հետո հարմարեցվել է քրիստոնեականին՝ հին աստվածների փոխարեն նոր աստծու և սրբերի անուններ դրվելով։ Պետք է կարծել, որ լոշտակին նվիրված աղոթքը նաև խաղողին էր վերաբերում, քանի որ սա իր մեջ ոգելից հյութ ունի։ Հեթանոսական խաղողօրհնեքն էր, որ հետո անցել էր քրիստոնեության ծեսերի մեջ, որովհետև խաղողի արգելքն ինքնին հեթանոսական է եղել։ Այդ տարուն իրականացվելու էր առաջին հերթին Վանատուրի անունից, ինչպես որ ուտիքի մթերքների վրա հսկելու դեր ունեի Ակլատիզը²⁸։ Այդ սրբազան տաբուի մնացուկներից էր խաղողի պաս պահելու սովորությունն ամենուրեք։ խաղողօրհնեքի օրը, օրինակ, Աշտարակցի բոլոր այգե-տերերը թաշկինակներով խաղող էին տանում եկեղեցի, որպեսզի քահանայի օրհնանքով ապահովվին բերքի առատությունը։ Ընդհանուր կաթսայի մեջ լցված խաղողն օրհնելուց հետո, բոլորը, այդ թվում նաև այգեգուրկները, ձգտում էին ձեռք բերել օրհնվածից, դրանով հաղորդվել, ինչպես նաև տուն առանել, որ ճաշակեն այն, քանի որ եթե ձեռքանք օրհնած հավող շուտեն, սաղ տարին պտի էլ հավողի համ չի տեսնին²⁹։

25 Ն. Հալալյան, Բորչալուի գավառ («Ազգագրական հանգես», X, էջ 189)։

26 Գ. Սրվանձաթյանց, Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի գուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 33։

27 Գ. Սրվանձաթյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 327—328։

28 Վ. Բզոյան, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ («Աշխատություններ Հայաստանի պետ. պատմ. թանգարանի», հ. III, Երևան, 1950, էջ 19)։

29 Պ. Պառչյան, Երկրի ժողովածու, հ. 1, Երևան, 1953, էջ 175, Հմմտ. «Ազգագրական հանգես», III, էջ 260։

Արդ, որտեղից են ծագում այս լոշ (102) և լոշտակ (102տակ) բառաձևվերը: Հր. Աճառյանը գտնում է, որ 102տակ բառը ծագում է 102-ից, իսկ վերջինս հայկական բարակ հացի անունն է: Ընդ որում, լաւաշ ձևն ավելի հին է համարում, որը ամփոփված ձևով եղել է լաւշ > 102: Գիտնականի հավաստմամբ՝ Գր. Տաթևացուց բացի հին գրականության մեջ այդ բառը ոչ ոք չի օգտագործել: Եվ որ հայերի, վրացիների, պարսիկների, քրդերի և այլ ժողովուրդների մեջ տարածված լաւաշ բառաձևի հայերեն լինելն էլ հաստատված չէ³⁰: Հավանորեն «բարակ» իմաստն արտահայտող 102-ը գործածվել է նաև դեղձի կեղևը ցույց տալու համար, որից պատրաստում են լոշ կուռքը:

Ինչպես երևում է, բոլոր լոշ նշանակող սրբազան առարկաները սրբազան հողի բերքի արդյունքներն են, որոնց հովանավորը Վանատուրն է Ամանորի հետ:

Իսկ ե՞րբ և ինչո՞ւ են դրանք լոշտակ կոչվել: Այդ երևույթը դարձյալ ծպտումի կամ գաղտնախոսության գաղափարի հետ է կապված, որը քրիստոնեության մուտքի հետևանքն էր: Դրանով էլ այժմ իսպառ մոռացության են մատնվել լոշտակի, լոշ կուռքի և մյուսների բուն վանատուրյան սրբազան անունները, որոնք հայտնի էին, անշուշտ, հեթանոս հայերին:

Լոշտակի մարդաձևությունը Հայկական լեռնաշխարհի տոհմացեղային հասարակություններին հայտնի է եղել դեռևս բուսահավաքչության նախնական շրջաններում: Անտարակուսելի է, որ այդ շրջանում այս բույսը բոլոր առարկաներից ավելի պիտի դառնար ողբալաշտական պարագա: Այդ բանի մնացուկները կարելի է տեսնել լոշտակը ներկայացնող առասպելում (լոշտակի արմատի աննշան մարդաձևության մեջ կատարյալ մարդակերպություն տեսնելը): Այստեղ գտնում ենք նաև տոտեմական հավատալիքների հետքեր, որոնցից գլխավորը պետք է համարել արմատի պեղման հետ առնչվող գործողության մի մասը. կարծեք թե տեղի է ունենում տոտեմն օգտագործելուց առաջ նրանից թուլյտվություն խնդրելու ծիսակատարություն: Հետևապես լոշտակի հետ կապված այդ նախնական հավատալիքները մուտք են գործում հեթանոսական պետական կրոնի մեջ, անցնելով բուսականության հովանավոր Վանատուր-Ամանոր աստվածությունների «տնօրինության» տակ: Հենվելով մեզ հասած առասպելի վրա, պետք է կարծել, որ հեթանոս ժողովուրդը երբեմն տոտեմը նույնացրել է պողաբերության աստվածությունների հետ, թերևս բույսը հենց նրանց անուններով էլ կոչվում:

Առասպելը նույնիսկ մեզ հուշում է, թե լոշտակի արմատը երբեմն ներկայանում է տղամարդու, երբեմն՝ կնոջ և երբեմն էլ՝ երեխայի կերպարանով: Նշանակում է, թե մենք այստեղ էլ գործ ունենք անանջատելի Վանատուր և Ամանոր զույգի հետ: Իսկ այստեղից գալիս ենք մի այլ հետևության. այն, որ Աշտարակի դեղձաշեն լոշ կուռքը կերտվելիս է եղել լոշտակի առասպելական մարդակերպության հիման վրա՝ նրա ձևերն ավելի ռեալիստական դարձնելով: Այնպես են կերտել, ինչպես առասպելն է հուշել և ոչ թե այնպես, ինչպես լոշտակի արմատն է: Ասել է, թե լոշը պարղապես լոշտակի մի այլ փոփոխական է կանացի և տղամարդու կերպարներով:

Որ լոշտակը ներկայացրել է Վանատուր-Ամանոր աստվածությունների «բնական արձանները», վկայում է լուռու ավանդությունը, որի համաձայն

30 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 308.

մարդն է, որ լոշտակ է դարձել: Այդ երևում է նաև աստվածային զուգին մարդ և շուն զոհաբերելուց. մի երևույթ, որը խորթ չէր երկրագործ ժողովուրդներին: Այդ է վկայում լոշտակը պեղելուց հետո երեք օր զարդարված աղջիկ ներկայացնելու ծիսակատարությունը: Քրիստոնեության երևան գալով մարդագործ մերժվում, իսկ շան զոհաբերումը շարունակվում է: Սակայն աղջիկը շան հետ սլիտի ներկայանալ, որպեսզի լոշտակի (իմա՝ Վանատուր-Ամանորի) համար պատրանք ստեղծվեր: Թեև վաղուց էր, ինչ Վանատուրը և Ամանորը որպես այդպիսի պահանջ ունեցող աստվածներ մոռացված էին, բայց XIX դարում կատարվող անձրևաբերության և այլ ծեսերում երևում էին երբևէ մարդագործության մնացուկներ³¹:

Առասպելի համաձայն, լոշտակ պահանջները (դեերը և այլն) շարունակյալ մարմնացումն են, որով արգելքի տակ է դրված դեղաբույսը: Այն պաշտպանվում է դեերի, սատանաների և այսերի կողմից: Հենց վերջիններս են, որ սպանում են լոշտակը տեղահան անողներին: Լոշտակը ևս, իբրև հեթանոսական աստվածությունների մարմնացում, չարք է համարվել, որը «վնասագործվելուց» հետո ինքն է դառնում շարահալած և լուսնոտի ու զառանցողի միջից վանում է շարքերին: Այսինքն՝ հեթանոսական պաշտամունքից մաքրվելուց հետո մեջտեղում մնում է ունալ դեղաբույսը:

Լոշտակի հասունացումը և այն պեղելու ժամանակը փաստորեն համընկնում էր խաղողի այգեկութին³²: Իսկ վերջինս աղբուս ուներ աստեղային կրոնի պատկերացումների հետ: Աշտարակում Ղալբուլ էր կոչվում այն «գիժ» աստղը, որը «խաղողի ժամանակն է դուրս գալիս. մինչև որ դուրս չգա, խաղողը չի հասնիլ»³³: Պարսկահայերը Մխչյանում այգ աստղը Կալբուլ են անվանում, որը, նրանց հավաստմամբ, ծագում է օգոստոսի 18—19-ի գիշերը. ասում են՝ «Կուլբուլը ծնավ»: Այս ծննդյան հետևանքով երկինքն առաջին անգամ այդ գիշերը գետնին ցող է դնում:

Ինչպես երևում է, Կուլբուլ-Ղոլբուլը Հրատ մոլորակն է (Մկրավորի, Հրատ, Կարմիր աստղ, Հրավոր և արաբերեն՝ Մառեխ), որին հույներն ու հռոմեացիները կոչել են իրենց պատերազմի աստվածների անուններով (Արես, Մարս): Տարակույս չունենք, որ Վանատուրը, որպես այգեգործության աստված, այդ ձևով մտել է աստեղային կրոնի մեջ, գուցե և Հրատ անունն է կրել և երկնքից էլ դեկավարել է այգեգործությունը: Նրան մարմնավորող Հրատն է, որ ցող է դնում, հասունացնում, քաղցրացնում է խաղողը և դրանով վերացնում խաղողն ուտելու արգելքը և ազդարարում այգեկութի: Իսկ դրան, անկասկած, ուղեկցել են մեհենական ծիսակատարությունները: Հենց այս ծիսական արարողությունն էր, որը հետո մտավ խաղողօրհնների մեջ³⁴:

Վասիլնեբ.— Վանատուրի և Ամանորի հետ անմիջական աղբուս ունեն նոր տարվա նախօրյակին՝ դեկտեմբերի 31-ին, պատրաստվող ու թխվող մարդակերպ ծիսական հացերը, որ կրում են Վասիլ կամ Ասիլ-Բասիլ անունները:

31 Վ. Բոդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, էջ 489—490:

32 Լոշտակը հանում էին նաև մայիսին:

33 Պ. Պոշյան, Երկրի ժողովածու, հ. 2. Երևան, 1953, էջ 241—242:

34 Ուշագրավ է Տարոնի հետևյալ սովորությունը. «Ս. Խաչի պահոց ուրբաթ օրը, առավոտյան ժամասացությունից հետո, կանայք խաղող, ձմերուկ և հաց առած գնում էին գերեզմանատուն, օրհնել տալիս գերեզմանը և ցրում այգ մրգերն ու հացը քահանային, ժամհարին և աղքատներին: Այգ մրգերը Նաեու-տրի են կոչվում: Տուն վերադառնալիս դրկիցներին էլ են քաժանում դրանցից» (Ե. Լալայան, Մուշ—Տարոն, Ազգագրական հանդես, XXVI, էջ 194):

Ախալքալաքի գեղջկուհիները հմտորեն վասիլ էին քանդակում անեկ խմորից՝ տան բոլոր անգամների համար: Դրանք, գոնե 1910—20-ական թվականներին և հետագա տարիներին, ունեին կիսանդրու ձև: Ախալքալաքի Աբուլ գյուղում մանչու վասիլն ամբողջական էր (նկ. 3—3): Դեմքի տարրերը ձևավորվում էին խմորի գնդիկներով, իսկ ամբողջ մարմինը զարդարվում էր ընկուզի միջուկով ու շամիչով: Տղամարդկանց և երեխաների վասիլների թևերը երբեմն աղատ (նկ. 3—1, 4) և երբեմն էլ կրծքերի վրա խաչված էին ձևացվում: Իսկ կանանց վասիլների ձեռքերը «բարև բռնած» ներկայացնելն ավանդական էր (նկ. 3—2): Բոլոր վասիլներն էլ երկար ու ծանր տարադններով էին, շալե ավանդական դոտիներով և գլխանոցներով: Տղամարդկանց կողքերին կցվում էին քսակներ, որոնք թխվելիս ուռճանալու դեպքում տերերը պիտի հարստանային, սմբելիս՝ սնանկանային: Հարսների որովայնները մեծանալիս պտղաբերություն էր սպասվում:

Բացի վասիլներից, պատրաստվում էին երկրագործության և անասնապահության գծով պտղաբերությունն ապահովող ծիսահացեր՝ ցորենի հոր՝ ցորենի հատիկներով, գարու հոր՝ գարեհատիկներով, եգնների լծեր, կովերի պտուկներ, խնոցիներ և այլն: Իսկ տվյալ նոր տարվա խորհրդանշանը բոլորշի ծիսահացն էր՝ տաքի անունով³⁵, որն իր նախազարդերով երբեմն ամբողջապես ներկայացնում էր աստղալից երկինքը:

Կարնո վասիլների ձևերը, Ե. Լալայանի վկայությամբ, տարածված էին նաև Լոռիում՝ Ասիլ-Բասիլ անունով³⁶, Հայաստանի մյուս նահանգներում մարդաձև ծիսահացերը թեև չէին հիշվում, բայց տարի հացի փոփոխականները և ուղեկցող թխվածքները պահպանվում էին մինչև 1930-ական թվականները³⁷, ինչ էին ներկայացնում վասիլները: Դրանց մասին մեր նախնական կարծիքը հետևյալն էր. «Ըստ երևույթին վասիլները ներկայացնում էին բնութան մեռնող ու հարություն առնող աստվածություններին՝ Նարին, Ակլատիզին, Արա Գեղեցիկին, ապա՝ Անահիտին ու Արամազդին: Հենց այս հանգամանքն


35 Ե. Լալայան, Զավախք. նշանավոր տոներ («Ազգագրական հանգես», II, էջ 245—246), Վ. Հ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, էջ 436—443: Կեսարիայում բոլորակ, ծակ հացը բոկեզ էր կոչվում: Ամանորին բոկեզն անցկացնում էին աղբյուրի ծորակին, խնդրելով, որ վերջինս չուր տա: Բայց մինչև ամանը չբով լցվելը չբովորը չանք էր թափում, որ բոկեզը չփախցնեին, որպեսզի տնօրենքին դժբախտություն չպատահեր: Ապա բոկեզը տարվում էր տուն, կախվում տան պատից մինչև հաջորդ Ամանորը (Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիո, Բ, Գահիրե, 1937, էջ 1758—1759): Արդյոք բոկեզը նույն տաքի-ն չէ՞ր:

36 Ե. Լալայան, Բորչալուի գավառ. նշանավոր տոներ («Ազգագրական հանգես», X, էջ 249):

37 Սույն ծիսահացը Կարինում, Շիրակում, Ախալքալաքում, Նոր Նախիջևանում հայտնի էր տաքի անունով (Ե. Լալայան, Զավախք. նշանավոր տոներ. «Ազգագրական հանգես», II, էջ 245—246), Սիսիանում, Գորիսում, Վարանդայում, Մեղրիում՝ Կրկեցե, կրկեցի, դովլաք կրկեցե կամ դովլաք կրկեցե (Ե. Լալայան, Սիսիան, նշանավոր տոներ. «Ազգագրական հանգես», III, էջ 249, 338, IV, էջ 106), Սայմասարում՝ միջեցի կլոն (Ս. Աթայան, Նալմաստ, Նոր Զուղա, 1906, էջ 175), Սուրմալուում՝ միջեցի կլոն (Ա. Ահարոնյան, Հոռ կինը, Թիֆլիս, 1897, էջ 54): Ընդ որում, Սայմաստում, Սուրմալուում և Զուղաում կլոնը թխվում էին միջինքին (զարնանամուտին):

Տարի հացի աստղալից երկինքը հիշեցնող նախազարդերի մեջ Արևից ու Լուսնից բացի կան նաև մուրրակներ: Դրանցից մեկը համարվում է Հոռոգի աստղը կամ Լուսաստղը, այսինքն՝ Արուսյակ-Վեներան (Երկրագործական մշակույթը Հայաստանում, էջ 440, տախ. CLXIB, Ա—8), իսկ մյուսի անունը մոռացված է (նույն տեղում. CLXIB, Ա—7):

է պատճառը, որ վասիլը ձեռքերը խաչելու տեսքով մեռած է ձևացվում: Ժողովուրդն, ըստ երևույթին, նրանց հարուստին տալու ծեսեր է կատարում³⁸: Այժմ մենք այդ տեսակետն ավելի ենք կոնկրետացնելու. տղամարդ վասիլը մարմնավորում է Վանատուրը, իսկ կանացիակերպ վասիլը՝ Նար>Ամանորը: Վասիլները նույնությամբ կրկնում են լոշի ձևերը: Այստեղ էլ վասիլները ներկայացնում են իբրև ամուսնական ղույգ, որոնք երեխաներ էլ ունեն: Ինչպես լոշը բնունիկում և լոշտակը պատանքում, վասիլներն էլ խաչված ձեռքերով խորհրդանշում են ամանորյա աստվածությունների մահը՝ ձմեռումը:



Նկ. 3. Ախալքալաթի Վասիլներ. 1. «տղամարդ» վասիլ (տան ավագ), 2. «կնիկմարդ» վասիլ (տանտիկին), 3. «մանչ» վասիլ (տղա), 4. «աղջիկ» վասիլ (աղջիկ):

Վասիլ բառի հայերեն նշանակությունը կրոնափոխման հետևանքով մոռացվել է, այսինքն՝ ծպտումի է ենթարկվել և հենց Վասիլ անվան տակ անցել: Վասիլը Հ. Աճառյանի բացատրությամբ ծագում է հույների ամանորյա սրբի՝ Բարսեղի անունից³⁹, որին նվիրված կաղանդի հայկական երգերը⁴⁰ այլ բան չէին, քան երբեմնի Վանատուրին ուղղված երգ-աղոթքներ: Իսկ Ասիլ-ը ծագում է եբրայերեն ասիլ բառաձևից՝ «արագիլ» նշանակությամբ⁴¹:


³⁸ Նույն տեղում, էջ 442:

³⁹ Հ.ր. Աճառյան, Գավառական բառարան (Վասիլ բառի տակ): Տե՛ս նաև նույնի Արմատական բառարան, հ. 1 (Բասիլիկոս բառի տակ):

⁴⁰ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ կեսարիո, Բ. էջ 1757—1758:

⁴¹ Հ.ր. Աճառյան, Արմատական բառարան, հ. 1 (ասիլ բառի տակ): Ի դեպ նշենք, որ ասիլ բառը «բաբ», «խիզախ» իմաստն էլ ունի (տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»): Ա. Օղաբաշյանը ելնելով հայոց բնապաշտության աղբրավոր ավանդություններից, ասիլ-ը կապում է արագիլին վերաբերող հավատքի հետ (Ա. Ա. Օղաբաշյան, Քրիստոնեական ամանորի հետ կապված որոշ ծիսական վերապրուկներ. ՀՄՄՀ «Տեղեկագիր», 1965, № 3): Իսկ Գր. Ղափանցյանը արագիլը համարել է Արա Գեղեցիկի համբավաբերը (Գր. Ղափանցյան, Խեթական մի առասպելի մասին (սն. Մուրի անվան կաթիլներ աշխատություններ», հ. 1, Երևան, 1945, էջ 180—185):

Նոր նախնականում երեխաները Ամանորին տնից տուն շրջելիս նավասարդյան երգեր էին երգում և ջնորհավորում համագյուղացիների Ամանորը: Այդ երգերից մեկը «Գալանտոսն» էր, որի մեջ նուրինը հիշեցնող մի անձնավորություն կա⁴²:



Նկ. 4. խաչիկներ. 1. Արտահունձն ավարտվելիս արտատիրոջը նվիրաբերվող խուրճ, 2—3. խաչիկունջ-խեչիկունջ-խաչբուռներ, 4. Բունունիկ-բնունիկ (Աշտարակ) ամանորյա ուտելիքներ (լոշ, լոշի գաթա, փշատ, սուջուխ, ալանի և այլն) պահելու համար:

⁴² Ն. Փ ո Ր Ք Յ յ ա ն, Նոր նախնականի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965, էջ 15—16:

Գալանտոս ⁴³ , տո՛ս, տո՛ս, կամ	Գալանտոս, տո՛ս տո՛ս,
Ամեն տարի բարև հասնիք,	Գալանտոսը էկիլ է,
Շնորհավոր նոր տարի,	Դուռին տակը կայնիլ է,
Նոր յանկային ⁴⁴ տուն տարի,	Շիլա շապիկ ⁴⁶ հագիլ է,
Շալի շապիկ հագուցի,	Կարմիր գոտի ⁴⁷ կապիլ է,
Քեմրե գոտի ⁴⁵ կապեցի,	Մեկ ավուճիկ ⁴⁸ խայիլ ⁴⁹ է:
Զայով-փունջով հարգեցի:	

Այս Գալանտոս—Նոր տարին ակնհայտորեն ներկայացնում է Ամանոր աստվածուհին, այսինքն՝ Նուրինի նմանակը՝ ամանորյա ֆունկցիայով: Մինչդեռ նույն վայրի անձրևաբեր Նուրինը հանդես է գալիս երկսեռ անուններով՝ Նորին-Նաղարեթ⁵⁰, որոնցից Նորինը Նուրինն է, իսկ Նաղարեթը, ամենայն հավանականությամբ, փոխարինել է Վանատուրին:

Այսպիսով, Վանատուրը և Ամանորը միաժամանակ թե՛ այգեգործության և թե՛ դաշտավարության հովանավոր աստվածություններ են եղել: Դաշտամշակության հովանավորության համար էր, որ հեթանոս հայերը նրանց ցորենի հասկավոր ցողուններից հյուսած փնջեր են ընծայաբերել: Դրանց տեսակները հասել են մինչև մեր օրերը, թեև հին նշանակությունները մոռացվել են: Այդպիսիներից են այժմ Խաչփունջ-խեչփունջ-խաչքուռ կոչված փնջերը, ինչպես նաև արտախիլի օրը արտատիրոջը նվիրաբերվող ցորենախրձերը (նկ. 4—1): Խաչփնջերի որոշ տարբերակներ պարզապես կրկնում են կենաց ծառի ոճավոր ձևերը (նկ. 4—2, 3): Իսկ այլ տեսակների խաչաձևությունը

43 Գալանտոս, Իտալերեն Calandus, Նոր տարի, Եր. Շահազիզը գրի է առել Կալանդոս ձևով (սեզագորական հանգես, IX, էջ 7—8):

44 Յանկա, ավագ եղբոր և հորեղբոր կանանց, ինչպես և առհասարակ մեծ կանանց կոչում:

45 Քեմրե գոտի, պարսկերեն քեմրա գոտի է նշանակում, իսկ քեմրէ՝ քակոր, կտոր: Վերջինիս դեպքում պետք է հասկանալ սկույով կեղտոտված գոտի, որը հավանորեն հեթանոսական սովորությամբ կիրառվելիս է եղել, ինչպես հնդկական կովապաշտներն էին վարվում: Ավելի ստույգ կլինի կեմրե գոտի-ն կարգալ կեմէ գոտի, որը նշանակում է խոտից ոլորած պարան-գոտի: Այստեղ Պուրպատիկը հենց կեմե գոտի է կապում, որը, անշուշտ, պսակի իմաստ ունի:

46 Շիլա շապիկ, կարմիր կտավից կարված շապիկ: Ինչպես Նուրինը, Գալանտոսն էլ կարմիր է հագնում, որովհետև այս գույնը նվիրական էր համարվում (աստվածային էր):

47 Կարմիր գոտին հյուսվում էր ընտիր թելերից, բազմապիսի նախշերով. սա նույնպես նվիրական տարազամաս էր համարվում, փոխարենն էր այն սրբազան գոտի-գոգնոցի, որը նախնադարում էին գործածում: Այս երկուսն էլ օգտագործվում էին մասնավորապես կտրիճների կողմից՝ որպես իրենց հասակային դասին հատուկ նշան:

48 Ավուճ, թուրքերեն avu — ափ, բուռ:

49 Խայիլ, արաբերեն kayil, հավան, համաձայն:

50 Այս երգի քառատողը գրի է առել Մ. Նալբանդյանը:

Նորին, Նորին Նաղարեթ,
Նորինը բաղջան էկիլ է,
Շալե շապիկ կապիլ է...
Կարմիր գոտի կապիլ է...

Համառ. Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Նուրին-Նաղարեթ երգի բանալին (Գրիտական ժողովածու, նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին, Երևան, 1941, էջ 194):

պետք է որ քրիստոնեությունը (գուցե և ծպտյալ հանդես գալու) հետևանքը լինեիր, թեև հեթանոս հայերին խաչն անժանոթ չէր: Վասիլները դրանց հետ անմիջական աղերսի մեջ են, ինչպես իոշը՝ այգեգործության հետ: Հետևապես, վասիլները ևս լիովին մարմնավորում են Ամանոր-Վանատոր աստվածությունները՝ երեխաներով հանդերձ:

Ամփոփենք: Վանատորի պաշտամունքին ղուգակցել է նաև Ամանորի պաշտամունքը: Ղ. Ալիշանի կոահումն այն մասին, թե հնարավոր է, որ Վանատորն ու Ամանորը հարս ու փեսա լինեին, ճշտվում է ազգագրական և բանահյուսական տվյալներով, որտեղ դրանք քրիստոնեությունից պաշտպանվելու համար ծպտվելու հետևանքով տարրեր բնագավառներում նոր անուններ են ընդունել: Այդպիսի ծպտյալ Վանատոր՝ Ամանոր ղուգեք էին՝ արական և լուսական սեռի լոշերը, լոշտակները և վասիլները:

К ВОПРОСУ О КОНСПИРИРОВАННОМ КУЛЬТЕ ВАНАТУР И АМАНОР

ВАРД БДОЯН

Резюме

Согласно сообщению историка V в. Агатангехоса, Ванатур являлся богом-покровителем садоводства у армян, храм которого находился в Багаван-Дицаване уезда Багреванд. Наряду с этим божеством историк упоминает и имя Аманор, которая, по предположению Г. Алишана, должна была быть супругой Ванатура с той же функцией.

Автор на основе нового осмысления этнографических и фольклорных материалов, пытается обосновать предположение Г. Алишана, находя, что под давлением христианства культ этих божеств повсеместно трансформировался и в последующие периоды функционировал под другими названиями. Конспирированный культ создал и конспирированные идолы с совершенно простыми названиями, как например, Лош (рис. 1), Тикин (букв. «кукла», но и «дама») и др. Лош и Тикин—антропоморфные фигурки, изготовлявшиеся в садоводческих районах из персика, абрикоса и грецкого ореха, олицетворявшие соответственно мужской и женский полы. Даруемые детям в день Нового года, Лош и Тикин, как показывает анализ всего комплекса материалов, не что иное, как конспирированные фигурки Ванатура и Аманор. В Армении растет являвшееся предметом почитания, многолетнее растение (лоштак), корни которого, напоминающие фигурки мужчины, женщины и ребенка, считались «природным» олицетворением супругов божеств Ванатур-Аманор (рис. 3). Фигурками указанных божеств были и выпекаемые на новый год антропоморфные ритуальные хлебцы, именовавшиеся Васил и Асил-Басил, которые имели вид мужчины (рис. 4—1), женщины (рис. 4—2), мальчика (рис. 4—3) и девочки (рис. 4—4). Об этом же свидетельствуют некоторые ритуальные обряды и церемонии, совершаемые в быту армян.